

ԱԳՐԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԼ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 16 - 25 2015 Թ. ԹԻՎ 24 (2079) ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՍ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅ



Նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է Կոտայքի մարզ

Նախագահ Սերժ Սարգսյանը, Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուների և Կոտայքի մարզի տեղական ու տարածքային կառավարման մարմինների ղեկավարների հետ, Ալափարս համայնքում ծանոթացել է ժամանակակից նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, «Կովկասֆուդ» ընկերության կողմից հիմնված պտղատու այգիներին, որոնք նախատեսված են ապահովելու բարձր բերքատվություն՝ մեծացնելով գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը՝ հետագայում հաջողված փորձը կիրառելի դարձնելով նաև այլ մարզերում:

Հանրապետության նախագահին ներկայացրել են ընկերության կողմից կատարված ներդրումները, իրականացված աշխատանքներն ու տարածքի զարգացման հետագա ծրագրերը: Ըստ պատասխանատուների՝ կատարվել է շուրջ 700.0 մլն դրամի ներդրում: 2016-2018թթ. նախատեսվում է իրականացնել ևս 200.0 մլն դրամի ներդրում:

Վարձակալված ընդհանուր 35.4 հեկտար մակերեսով հողատարածքի վրա ընկերությունը, ելնելով բնակլիմայական պայմաններից և հողի որակից, հիմնել է 29.3 հեկտար մակերեսով ընկուզենու և խնձորենու այգիներ, որից՝ խնձորենին զբաղեցնում է 9.2 հեկտար, իսկ ընկուզենին՝ 20.1 հեկտար: Այն մշակվում է ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխան. կառուցվել են արդի ավտոմատացված ոռոգման կաթիլային և կարկտապաշտպան համակարգեր (այգին ցանցապատվել է):

Հողային աշխատանքներն սկսվել են 2014թ. հոկտեմբերին, իսկ ծառատունկը կազմակերպվել է 2015թ. մարտ-ապրիլ ամիսներին: Կատարված աշխատանքների արդյունքում, խնձորենին և ընկուզենին լիարժեք բերքատվության ցուցանիշներ կապահովեն՝ համապատասխանաբար 4-րդ տարում (40 տոննա՝ 1 հեկտարից) և 7-րդ տարում (7 տոննա՝ 1 հեկտարից):

«Կովկասֆուդի» պատասխանատուների հավաստմամբ, ընթացիկ աշխատանքների և պահպանման համար այգում ներկայումս մշտական աշխատանք է իրականացնում 10 աշխատակից՝ 150,000 ՀՀ դրամ միջին ամսական աշխատավարձով: Սեզոնային աշխատանքների ժամանակ, նախնական հաշվարկներով, այգում լրացուցիչ կաշխատեն 30-50 աշխատակից՝ 120,000-150,000 ՀՀ դրամ միջին ամսական աշխատավարձով:

ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Իտալական «Colle Doro» ընկերությունը՝ ներդրումներ իրականացնելու մասին

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է իտալական «Colle Doro» ընկերության պատվիրակությանը: Ընկերությունը մասնագիտացած է պտուղ-բանջարեղենի արտադրության մեջ և հետաքրքրված է Հայաստանում ներդրումային ծրագրերի իրականացմամբ:

Ողջունելով հյուրերին՝ նախարարը նշել է, որ գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության հեռանկարային ուղղություններից է, և վերջին տարիներին ոլորտում գրանցվում է կայուն առաջընթաց: «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի բնակլիմայական պայմանները բարենպաստ են գյուղատնտեսական մթերքների արտադրության համար՝ կարծում եմ, որ ներդրումային տեսակետից մեր երկիրը բավականին հետաքրքրական կարող է լինել, քանի որ գյուղատնտեսության ոլորտն ազատված է հարկերից», - նշել է Սերգո Կարապետյանը: Ներդրումների իրականացման առումով, առավել նպատակահարմար ճյուղերի թվում, նախարարը, մասնավորապես, մատնանշել է ջերմոցային տնտեսությունների ստեղծման, պտղատու այգիների հիմնման, նոր գինեգործական ընկերությունների ստեղծման հնարավորությունը:

Նախարարը կարևորել է նաև անասնապահության ոլորտը՝ որպես ներդրումային կարևոր ուղղություն, որի զարգացումը թույլ կտա ոչ միայն ավելացնել մսամթերքի և կաթնամթերքի արտադրության ծավալները, այլև ընդլայնել պանրի արտադրանքի տեսականին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Յուրիկ Աբրահամյանի գլխավորությամբ, կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, հանրապետության մարզպետները և պաշտոնատար այլ անձինք: Օրակարգային առաջին հարցով անդրադարձ է կատարվել մարզերում իրականացվող հրատապ կապիտալ ծրագրերի ընթացքին: Չեկուցվել է, որ նախատեսված բոլոր ենթակառուցվածքային 159 ծրագրերն իրականացվում են հաջողությամբ՝ առանց որևէ խնդրի: Վարչապետը կարևորել է ծրագրերի որակով և սահմանված ժամանակահատվածում իրականացումը:

Այնուհետև քննարկվել են խաղողի մթերման գործընթացին առնչվող հարցեր: Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ այս տարի հանրապետությունում ստացվել է խաղողի բարձր բերք, որի մթերման ուղղությամբ իրականացվում են ամենօրյա աշխատանքներ: Տեղեկացվել է, որ 50 մթերող կազմակերպություններից 17-ն արդեն իսկ սկսել է մթերումը, իսկ մյուսներն աշխատանքները կսկսեն մի քանի օրից: Սերգո Կարապետյանի խոսքով՝ տարվում են համապատասխան աշխատանքներ՝ աճեցված ամբողջ բերքը մթերելու համար:

Անդրադառնալով աշնանացանի ուղղությամբ իրականացվող աշխատանքներին՝ նախարարը զեկուցել է, որ կառավարությունը բավարարել է մարզպետարանների կողմից ներկայացված ազոտական պարարտանյութի, դիզելային վառելիքի և հացահատիկային մշակաբույսերի սերմացուի ողջ պահանջարկը: Մարզպետները զեկուցել են, որ ցանքը ժամանակին կիրականացվի, քանի որ բարենպաստ են նաև կլիմայական պայմանները:

Առաջիկայում նախատեսվում են կարևոր ձեռքբերումներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՀՀ-ում Բելառուսի Լորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Իգոր Նազարուկին: Ընդհանրելով հյուրին մեր երկրում դիվանագիտական առաքելությունն սկսելու կապակցությամբ՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ նրա պաշտոնավարման ընթացքում հայ-բելառուսական հարաբերությունները կդառնան առավել ակտիվ և արդյունավետ:

Այնուհետև նախարար Սերգո Կարապետյանը հակիրճ ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի ներկա վիճակը՝ ընդգծելով, որ հատկապես վերջին տարիներին ստեղծվել են բարենպաստ նախադրյալներ՝ ոլորտի դինամիկ աճի համար: Գյուղատնտեսության բնագավառում վերջին տարիների կարևոր ձեռքբերումների թվում նախարար Սերգո Կարապետյանն առանձնահատուկ կարևորել է Բելառուսից գյուղտնտեսիկայի, մասնավորապես, տրակտորների ներկրման գործընթացը: Նախարարը նաև հավելել է, որ մատչելի պայմաններով առաջարկի դեպքում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պատրաստ է ուսումնասիրել լրացուցիչ խմբաբանակի ներկրման հնարավորությունը:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են նաև բելառուսական ներդրումներով Հայաստանում տրակտորների հավաքման արտադրամասի հիմնման հարցին: Դեսպանը նաև առաջարկել է բելառուսական արտադրության կոմբայններ ներկրել Հայաստան և իրականացնել ցուցադրական շահագործում՝ հայ ֆերմերներին տեխնիկայի հնարավորություններին ծանոթացնելու նպատակով: Կողմերը երկուստեք ընդգծել են, որ անհրաժեշտ է առավելագույնս օգտվել Եվրասիական տնտեսական միության ընձեռած հնարավորություններից՝ խթանելով ապրանքաշրջանառությունը: Քննարկվել են նաև Բելառուսի ագրարային բուհերում հայ մասնագետների վերապատրաստման, գյուղմթերքի արտահանումների և սննդամթերքի անվտանգության ոլորտում երկու երկրների միջև համագործակցության սերտացման հարցերը:

Մարզում բացվել է ջրարբիացման նոր համակարգ	Էջ 3
Մեկնարկեց «ARMENIA EXPO 2015»-ը	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իտալական «Colle Doro» ընկերությունը՝ ներդրումներ իրականացնելու մասին

1



Ընդգծելով, որ հայկական պանիրը մեծ պահանջարկ ունի արտասահմանյան, հատկապես՝ ռուսաստանյան շուկայում, Նախարարը հավելել է, որ այս ոլորտում ներդրումների իրականացումը կնպաստի արտադրատեսակի արտահանման ծավալների աճին: Պատվիրակության անդամներն իրենց հերթին նշել են, որ հետաքրքրված են Հայաստանի գյուղատնտեսության ոլորտով և ներկայումս ուսումնասիրում են ներդրումային առումով առավել հեռանկարային ուղղությունները: Հանդիպման ավարտին ՀՀ գյուղատնտեսության Նախարար Սերգո Կարապետյանը պատրաստակամություն է հայտնել օժանդակություն ցուցաբերել իտալացի գործարարներին՝ Հայաստանում ներդրումային ծրագրերի իրականացման գործում:

Կոնյակագործների միության ընդլայնված նիստ

ՀՀ գյուղատնտեսության Նախարար Սերգո Կարապետյանը Երևանի կոնյակի գործարանում մասնակցել է Հայաստանի կոնյակագործների միության ընդլայնված նիստին, որին ներկա էին նաև գինեգործների միության անդամներ:

«Մեր այսօրվա նիստի հիմնական նպատակը երկու միությունների միջև համագործակցության եզրեր գտնելն ու աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպումն է», - նշել է իր խոսքում Նախարար Սերգո Կարապետյանը:

Ըստ նրա՝ երկու միությունների առանձին գործունեությունը մեծ արդյունավետություն չի ապահովում և պետություն-մասնավոր հատված համագործակցությունն ավելի սերտացնելու համար նման ձևաչափով քննարկումները կարող են շատ օգտակար լինել: Սերգո Կարապետյանը հավելել է, որ տարիներ շարունակ այս ոլորտում բազում հարցեր են կուտակվել, որոնք լուծում են պահանջում և



պետք է ամեն ինչ անել առաջիկայում այդ խնդիրներին լուծումներ տալու համար: Ըննարկումների արդյունքում Նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է ստեղծել նախաձեռնող խումբ և մեկամսյա ժամկետում քննարկել և ներկայացնել իրենց միասնական վերջնական դիրքորոշումը՝ երկու միությունների միավորման նպատակահարմարության վերաբերյալ:

Ըննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև խաղողի մթերումների ընթացքին: Այս ենթատեքստում Նախարարը նշել է, որ արդեն մեկ շաբաթ է հանրապետության 3-4 մարզերում ընթացքի մեջ են մթերման աշխատանքները, և բոլոր ընկերություններն էլ պատրաստակամ են մթերել արտադրված բերքը, սակայն ներկայումս առկա են որոշակի ֆինանսական խնդիրներ: Նախարարը նաև հավելել է, որ առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում բոլոր մթերող կազմակերպությունները պետք է սկսեն մթերման աշխատանքները:

Նիստի օրակարգում էին նաև որակյալ կոնյակի արտադրության և ատահանման հետ կապված խնդիրները, ինչպես նաև մթերվող խաղողի որակի նկատմամբ հսկողության սահմանման մեխանիզմները: Խնդրի շուրջ զեկույցով հանդես է եկել Հայաստանի կոնյակագործների միության Նախագահ Արա Գրիգորյանը: Չեկույցում կարևորվել է տեղական արտադրանքի որակի բարձրացումը, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի հայկական կոնյակի արտահանման ծավալների ավելացման համար:

Արա Գրիգորյանը նաև կարևորել է ՀՀ գյուղատնտեսության Նախարարության հետ նման համատեղ նիստերի իրականացումը, ինչը թույլ է տալիս բարձրաձայնել իրենց հուզող խնդիրները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ներկայացրեցին գյուղողորտի զարգացման նոր ծրագրեր

ՀՀ գյուղատնտեսության Նախարար Սերգո Կարապետյանի նախաձեռնությամբ իրավիճակը էր խորհրդակցություն՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական կազմի մասնակցությամբ, համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանի ղեկավարությամբ: Հանդիպման նպատակն էր քննարկել նրանց կողմից ներկայացված գյուղատնտեսության ոլորտի զարգացման ուղղված ծրագրերի ներդրման հնարավորությունները:

Նախարարի խոսքով՝ գյուղատնտեսության ոլորտում խնդիրները շատ են, և անհրաժեշտ է օգտագործել մեր ունեցած գիտական ներուժն առկա խնդիրները վերհանելու, դրանց արդյունավետ լուծումներ տալու և ոլորտին զարգացման նոր թափ հաղորդելու նպատակով: Նախարարը նաև նշել է, որ պետք է առաջնահերթություն տալ այն առաջարկներին, որոնք իրատեսական են ֆինանսական ներդրումների առումով և հնարավորինս կարճ ժամկետում կարող են տեսանելի արդյունք ապահովել:

Ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանն իր հերթին նշել է, որ առաջարկվել են թվով 8 ծրագրեր, որոնք կիրառական կարևոր նշանակություն ունեն և կարող են թռիչքային զարգացում ապահովել ոլորտում: Ընդ որում, միայն մեկը՝ կարտոֆիլի վիրուսագերծ տնկանյութի արտադրությանը վերաբերող առաջարկն է, որի համար անհրաժեշտ կլինի պետական բյուջեից ֆինանսավորում իրականացնել, մնացած ծրագրերը կարող են կյանքի կոչվել՝ մատչելի պայմաններով վարկային ռեսուրսների տրամադրման դեպքում:

Համալսարանի մասնագետները մասնավորապես առաջարկել են կարտոֆիլի վիրուսագերծ տնկանյութի արտադրություն ստեղծել, ինչպես նաև վերականգնել և՛ ԽՍՀՄ տարիներին մեծ համարում ունեցող ռոկֆոր և շվեյցարական պանիրների տեսակների արտադրությունը, որը մեծ օգուտ կբերի մեր երկրին: Սրա համար անհրաժեշտ կլինի ներգրավել երկարաժամկետ վարկային միջոցներ և ավելացնել արտադրության ծավալները:

Նախարար Սերգո Կարապետյանն առաջարկեց ՀԱԱՀ-ին կից անասնապահական ֆերմայի վերամշակման արտադրամասում նախաձեռնել այդ պանրատեսակների ցուցադրական արտադրություն:

Մասնագետները հանդես են եկել նաև տոհմային այծաբուծության զարգացման առաջարկով: Նրանց խոսքով՝ ծրագրի արդյունավետությունը շատ բարձր է և կնպաստի այծերի կաթնատվության շեշտակի ավելացմանը:

Նախարարը նշել է, որ այծաբուծությունը շատ կարևոր ճյուղ է, հատկապես՝ եթե հաշվի առնենք, որ այծի կաթից արտադրված մթերքների նկատմամբ մեծ պահանջարկ կա միջազգային շուկայում: Քննարկվել են նաև ռուսաստանյան սուրճի արտադրության հիմնման հնարավորությունները, որի միջոցով կարելի է կազմակերպել նաև գինիների և հյութերի արտադրություն՝ արտահանման հեռանկարով: Առաջարկվել է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաև սեղանի սուրճի արտադրության վրա, քանի որ դրանք արդեն երկու տարի հետո բերք են տալիս, և մոտ չորս տարուց հնարավոր կլինի խոսել ծրագրի արդյունքների մասին:

Խորհրդակցության ավարտին՝ ներկայացվեցին նաև առաջարկներ խաղողի այգու միջվազային տարածությունների մշակության մեքենայի արտադրության կազմակերպման, «Բայկալ-ԷՄ-1» պատրաստուկով պատրաստվող կոմպոստի, ոչ կոնտակտային եղանակով էլեկտրամեխորացմամբ Արարատյան դաշտավայրի սողնակալի հողերի բարելավման վերաբերյալ: Քննարկումների արդյունքում կայացված որոշումները կփոխանցվեն ՀՀ կառավարությանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Մթերման գործընթացը շարունակվում է

ՀՀ գյուղատնտեսության Նախարար Սերգո Կարապետյանը օրերս այցելել է Արմավիրի և Արարատի մարզեր՝ խաղողի մթերման աշխատանքների ընթացքին հետևելու նպատակով:

Այցի սկզբում Նախարարը մասնավորապես եղել է Երևանի «Արարատ գինու, կոնյակի, օղու կոմբինատի» Արմավիրի մասնաճյուղում, ապա Արմավիրի մարզպետ Աշոտ Ղաիրամյանի ուղեկցությամբ, մեկնել է «Շահնագարյան գինու կոնյակի տուն» ընկերություն:

Մինչ այդ Նախարարը հանդիպել է նաև մարզի խաղողագործների հետ, ծանոթացել նրանց հուզող խնդիրներին, որի շրջանակում անդրադարձ է կատարվել նաև նորատունկ այգիների խաղողի մթերման կազմակերպման հարցին: Այս կապակցությամբ Նախարարը տեղեկացրել է, որ չնայած այս դեպքում խաղողագործների հետ մթերման համապատասխան պայմանագրեր չեն կնքվել, սակայն ընկերությունները պատրաստ են նրանց բերքը նույնպես մթերել: Նախարարը նաև հավելել է, որ մարզում ներկայումս վերամշակող 16 ընկերություններից 12-ն արդեն սկսել են մթերման գործընթացը:

«Երևանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատում», որտեղ սեպտեմբերի 22-ից տրվել է խաղողի մթերման մեկնարկը, ընկերության գործադիր տնօրեն Արմեն Չաքարյանը Նախարարին տեղեկացրել է, որ Նախատեսում են մթերել, ընդհանուր առմամբ, շուրջ

20 հազար տոննա խաղող, այդ թվում՝ նաև նորատունկ այգիներից:

«Շահնագարյան գինու կոնյակի տուն» ընկերությունում, որը Նախարարի այցի երկրորդ կանգառն էր, խաղողի մթերման աշխատանքները հենց այդ օրն էին մեկնարկել /22.09/: Ընկերության տնօրենի խոսքով, այս տարի իրենց կողմից մթերված խաղողի ծավալները կգերազանցեն Նախորդ տարվա մակարդակը: Նախարարը հորդորել է մթերել խաղողագործների կողմից առաջարկվող արտադրանքի ամբողջ ծավալը:

Այցի շրջանակում Նախարար Ս. Կարապետյանը եղել է նաև «Արարատ գինու, կոնյակի, օղու կոմբինատի» Մասիսի մասնաճյուղում և Տափերակայի «Ա.Կ.2.» ընկերությունում, որտեղ նույնպես մեկնարկել է մթերման գործընթացը: Նախարարը շրջել է վերնշյալ ընկերություններում, հետևել ընթացիկ աշխատանքներին: Ս. Կարապետյանին հավաստիացրել են, որ խաղողի մթերումների գործընթացը ընթանում է սահուն կերպով և առանց խոչընդոտների:

Այցի ավարտին Նախարար Սերգո Կարապետյանն այցելել է նաև Դալար համայնքի «Արեգակ» ընկերություն, որտեղ նա մեկնարկել է խաղողի մթերումը: Այստեղ Նախարարին վստահեցրել են, որ Նախորդ տարվա մթերման ծավալներն ընթացիկ տարում կպահպանվեն, դեռ ավելին՝ հավելյալ առաջարկի դեպքում, այն ևս առանց որևէ խնդրի կմթերվի:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ՄԱՐԶՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԶՐԱՐԲԻԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

«Հ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքում մասնակցել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (CARMAC) ծրագրի շրջանակում կառուցված ջրարբիացման համակարգի բացման արարողությանը: Միջոցառմանը ներկա էին Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի տնօրեն Լորա Բեյլին, Շիրակի մարզպետ Ֆելիքս Տոլսկյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» տնօրեն Գագիկ Խաչատրյանը, այլ պաշտոնավար անձինք և հյուրեր:

Ներկայումս Գուսանագյուղ համայնքի արոտավայրերի ընդհանուր տարածքը կազմում է 995 հեկտար, խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը՝ 863 գլուխ: Ծրագրով համայնքում իրականացվել են ջրարբիացման աշխատանքներ, և տրամադրվել է գյուղտնտեսական: Ծրագրի ավարտից հետո, համայնքի 995 հա ջրարբիացված արոտները կարող են տարեկան ապահովել հավելյալ շուրջ 410 տ կաթի ստացում, իսկ ձեռք բերված գյուղտնտեսական թույլ կտա 40 %-ով (շուրջ 600 տ) բարձրացնել մսուրային շրջանի համար համայնքում կուտակվող անասնակերի ապահովվածությունը:

«Գուսանագյուղը հանրապետությունում 91-րդ, իսկ մարզում 18-րդ համայնքն է, որտեղ իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիրը», որի հիմնական նպատակն է՝ անասնապահության զարգացումը լեռնային այն համայնքներում, որտեղ այն ապրուստի հիմնական միջոցն է: Այս ծրագրով, վերջին հինգ տարիների ընթացքում, մենք կարողացել ենք բավականաչափ խնդիրներ լուծել, լեռնային 1 մլն. 50 հազար հեկտար արոտավայրերից արդեն ջրարբիացվել է մոտ 200 հազար հեկտարը, և մինչև 2019 թվականն այս ցուցանիշը պետք է հասնի մինչև 400 հազար հեկտարի», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը նաև տեղեկացրել է, որ փետրվար ամսից սկսել է գործել CARMAC երկրորդ ծրագիրը, որն ամբողջապես ներառելու է գյուղատնտեսության, հատկապես անասնապահության ոլորտի բոլոր արժեզրեաները:

Երկրորդ ծրագրի նպատակն է՝ անասնազնաքանակի ավելացումից և մթերատվության բարձրացումից բացի, լուծել նաև ապրանքի շուկայահաման, որակի կարգավորման, փոքր արտադրամասերի ստեղծման խնդիրներ, ինչը կնպաստի վերամշակման ճյուղի զարգացմանը: Նախարար Սերգո Կարապետյանի խոսքով՝ այս ծրագրի արդյունքում, վերջին տարիներին անասնապահության ոլորտում հաջողվել է գրանցել շոշափելի արդյունքներ: Մասնավորապես, միայն ընթացիկ տարվա 7 ամիսների ընթացքում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակն ավելացել է 3,6, իսկ մանր եղջերավոր կենդանիներինը՝ 7,2 տոկոսով:



Անդրադառնալով կաթի մթերման գններին՝ նախարարը նշել է, որ այս տարի պարենային կարևորագույն ապրանքների գների իջեցումն ունի համաշխարհային միտում, սակայն հանրապետությունում կաթի գինն արդեն սկսել է բարձրանալ և, առաջիկա մեկ-երկու ամիսների ընթացքում կկարգավորվի:

Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի տնօրեն Լորա Բեյլին իր խոսքում նշել է, որ տպավորված է նշված թվերով, և հույս ունի, որ դրանք կնպաստեն համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը: Ընդգծելով, որ գյուղատնտեսությունն ու գյուղը Հա-

յաստանի տնտեսության սիրտն են՝ ՀՀ պաշտոնյան հավելել է, որ իրենց լավագույն ծրագրերը հենց գյուղական համայնքներում իրականացվածներն են:

Ընդհանուր առմամբ, այս համայնքում, ծրագրի շրջանակում, 150 մլն դրամի ներդրում է կատարվել, որի կեսն ուղղվել է ջրարբիացման համակարգերի կառուցմանը, իսկ մնացած միջոցներով գյուղտնտեսական է ձեռք բերվել, այդ թվում՝ 2 միավոր անիվավոր տրակտոր և 5 միավոր այլ տեխնիկա:

CARMAC ծրագրի հիմնական նպատակը՝ գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացումն է:

ԿՐԹԱՎԱՆ

ԱԳՐՈՆՈՄԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Վերջերս ՀԱԱՀ փոքր դահլիճում ՀԱԱՀ ռեկտոր Ա. Թարվերյանը և Մեղրիի ու Ագարակի դպրոցների տնօրենները վավերացրին համագործակցության պայմանագիր, ըստ որի՝ Մեղրիի և Ագարակի միջնակարգ դպրոցներում կպատրաստվեն այգեգործական, բնագիտական և տեխնոլոգիական ուղղություններով խորացված ուսուցում ստացած շրջանավարտներ՝ համալսարանում գործող վերոհիշյալ մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ստանալու ակնկալիքով:



Ծրագրի իրականացման համար դպրոցներում կկազմավորվեն նպատակային դասարաններ: Հոսքային դասարաններում կդասավանդվեն «Այգեգործություն», «Բնապահպանություն» և «Տեխնոլոգիա» առարկաները: Նշված դպրոցների ուսուցիչները վերապատրաստման դասընթացներ կանցնեն ՀԱԱՀ-ում: Նշենք, որ այս ծրագիրն իրականացվում է՝ «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի շրջանակներում: «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը և ՀԱԱՀ-ը Մեղրիի տարածաշրջանում համատեղ իրականացնում են մի նախագիծ, որի նպատակն է՝ խթանել այգեգործության զարգացման համար անհրաժեշտ մասնագետների ապահովման գործը և ներդնել այնպիսի համակարգ, որի արդյունքում տվյալ տարածաշրջանի դպրոցները հնարավորություն կունենան ստանալ գյուղատնտեսության ոլորտի նախնական կամ միջին մասնագիտական տեխնիկական կրթություն: ցանկության դեպքում հետագայում ուսումը կարող են շարունակել ՀԱԱՀ-ում:

«Շուկաներ Մեղրիի համար» ծրագիրն իրականացվում է CARD հիմնադրամի և շվեյցարական HELVETAS Swiss intercooperation-ի համատեղ ջանքերով, որի նպատակն է՝ աջակցել Մեղրիի տարածաշրջանի պտղաբույծների, վերամշակողների և առևտրային կազմակերպությունների արտադրողականության և եկամտաբերության բարձրացմանը: Պայմանագիրը վավերացնելուց հետո, կողմերը քննարկել են ծրագրի իրականացման մեխանիզմներին և հետագա զարգացումներին վերաբերող հարցեր:

ԿՈՊՊԵՐԱՅԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՊՊԵՐԱՏԻՎՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՈՒՄ Է, ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

«Ժամանակի մարտահրավերները պահանջում են վերանայել տղամարդկանց և կանանց ավանդական դերը՝ ինչպես ընտանիքում, այնպես էլ՝ հասարակության մեջ», - ասում է Տավուշի մարզի Գոշ համայնքի գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ Արմինե Գրիգորյանը:



Արմինե կոոպերատիվի ամենաերիտասարդ անդամներից է: Նա մասնագիտությամբ մանկավարժ-հոգեբան է, ավարտել է ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը: Այժմ ստանում է 2-րդ կրթությունը՝ հեռակայնիվ պատմության ֆակուլտետում, միաժամանակ, ուսուցչուհի է աշխատում գյուղական դպրոցում: Արմինեի մայրը, տիկին Լարիսան, նույնպես կոոպերատիվի անդամ է: Ի դեպ, Արմինե ստանձնել է, ՕԶՖԱՍ-ի աջակցությամբ ստեղծված, կոոպերատիվի քարտուղարի պարտականությունը:

«Ես պատահաբար հայտնվեցի կոոպերատիվի ժողովում, երբ հիմնադրվում էր այն: Մայրս այնտեղ էր: Ժողովն ինձ համար այնքան հետաքրքիր էր, որ չուզեցի դուրս գալ, նույնիսկ խնդրեցի, որ ինձ, որպես անդամ, ընդգրկեն կոոպերատիվում», - հիշում է Արմինե: Այժմ

ևս վարում է կոոպերատիվի ամբողջ թղթաբանությունը, կրում կազմակերպչական հարցերի պատասխանատվությունը: Դիլիջանտ ավարտել է համակարգչային դասընթացները, և ստացած գիտելիքները այժմ շատ են օգնում: «Ես մեր ամբողջ աշխատանքը նկարահանում եմ տեսախցիկով, տեղադրում սոցցանցում և, որպես կանոն, շատ արձագանքներ ենք ստանում: Մենք էլ մեր հաջողություններն ու դժվարություններն ենք կիսում ուրիշների հետ», - պատմում է Արմինեն:

Երբ սկսեցին աշխատել, որոշ մարդկանց մոտ տարակուսանք կար, թե արդյո՞ք կարող են կարգավորել աշխատանքը: Իսկ Արմինեն հավատում էր, որ կստացվի, կսովորեն, կաջակցեն իրենց, չէ՞ որ արդեն առկա էր կոոպերատիվի փորձն ուրիշ համայնքներում: Բարեբախտաբար, այդպես էլ եղավ: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի ձայնը կարևոր է և անհրաժեշտ: Իրենց աշխատանքով կանայք ապացուցեցին, որ նույնիսկ ամենադժվարին խնդիրները հնարավոր է լուծել, երբ տղամարդիկ և կանայք հարգում են միմյանց, և չկան հակասություններ: Կանայք փոխվել են, համայնքում փոխվել է նաև վերաբերմունքը ակտիվ կանանց նկատմամբ:

«Ինձ համար կոոպերատիվը նոր փորձառություն է՝ թե՛ գործունեության, և թե՛ կոլեկտիվում՝ փոխհարաբերությունների տեսանկյունից: Աշխատանքը կոոպերատիվում և ինքնահաստատում է, և ինքնագնահատում: Շատ եմ կարևորում ուրիշների կարծիքները, իսկ մայրս ինձ համար կյանքի կայունության և ուժեղ կամքի օրինակ է: Ես հավասարվել եմ իրեն, և հիմա, երբ մենք դարձել ենք նույն թիմի անդամներ և կոոպերատիվում աշխատում ենք միասին, ավելի ենք մտերմացել», - հավելում է Արմինեն:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ՄԹԵՐՎԵԼ Է ՇՈՒՐՋ 75 000 ՏՈՆՆԱ ԽԱՂՈՂ



«ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Արագածոտնի մարզի «Արմենիա Վայն» ընկերություն, որտեղ ծանոթացել է խաղողի մթերման աշխատանքներին:

«Ներկայումս խաղողի մթերումների եռուն շրջանն է, և ընկերությունների մեծ մասն արդեն սկսել են մթերումներ իրականացնել: Առաջիկա 2-3 օրերի ընթացքում հանրապետության բոլոր մթերողները, բացի Վայնի ճորի մարզից, որտեղ հիմնական աշխատանքները կսկսվեն հոկտեմբերի 2-5-ն ընկած ժամանակահատվածում, կանցնեն խաղողի մթերումների իրականացմանը», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարի խոսքով՝ այս պահի դրությամբ, մթերվել է շուրջ 75 հազար տոննա խաղող, զուգահեռ ընթանում է նաև արտահանումների գործընթացը: Արդեն իսկ արտահանվել է շուրջ 3750 տոննա խաղող, որը նախորդ տարվանից շուրջ 200 տոննայով ավել է, իսկ պտուղ-բանջարեղենի ընդհանուր արտահանման ծավալները շուրջ 11 500 տոննայով գերազանցում են 2014 թվականի ամբողջ տարվա ցուցանիշը, ընդ որում, մինչև տարեվերջ աճի դինամիկան կպահպանվի:

Նախարարը նաև հավելել է, որ այժմ հանրապետությունում ընթանում է բերքահավաք, բնակլիմայա-

կան պայմաններն այդ առումով նպաստավոր են, և շուկայահանման և վերամշակման առումով, խնդիրներ չեն լինի:

Իր հերթին «Արմենիա Վայն» ընկերության ինդուստրիալ տնօրեն Դանիել Ղևոնդյանը հայտնել է, որ այս տարի պայմանագրերով նախատեսվել են մթերել 4500 տոննա խաղող, որից 2700 տոննան արդեն իսկ մթերվել է. մթերման աշխատանքները կշարունակվեն մինչև հոկտեմբերի 10-15-ը:

Անդրադառնալով արտահանման հարցին՝ տնօրենը նշել է, որ խնդիրներ գրեթե չեն եղել՝ բացառությամբ Ռուսաստանի Դաշնությունում վաճառքի ծավալների փոքր-ինչ նվազման: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ընկերությունը նաև նոր պայմանավորվածություններ է ձեռք բերել այլ երկրների հետ՝ արտադրված գինին արտահանելու համար:

Ընկերության ֆրանսիացի գինեգործն իր հերթին նշել է, որ թեև մթերման շրջանը դեռևս ընթացքի մեջ է, սակայն արդեն իսկ ակնհայտ է, որ այս տարվա խաղողի բերքից որակյալ գինի կստանան:

ՀԱՐՅԱՉՐՈՒՅՑ

ՆՈՐ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ

«ՎԵՍ ՊԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում առաջին մետաղապլաստ և պլաստիկ խողովակներ արտադրող «Նյուպլաստ» և առաջին ու միակ ապակեպլաստ խողովակներ արտադրող «Ջի Ար Փի Սիսթեմս» ընկերությունները:

«ՎԵՍ ՊԼԱՍ ԳՐՈՒՊ» ընկերության «Նյուպլաստ» ապրանքանիշով արտադրվող խողովակները կազմում են ոչ միայն հայաստանյան շուկայում օգտագործվող պոլիմերային խողովակների զգալի մասը, այլ նաև իրենց ուրույն տեղն ունեն Ռուսաստանի և Վրաստանի շուկաներում: Ընկերությունը գործում է միջազգային ամենախիստ չափանիշների պահանջներին համապատասխան:

Ընկերությունը գյուղատնտեսության ոլորտի համար արտադրում է ոռոգման համակարգերի խողովակներ, որոնցից հարկ է առանձնահատուկ նշել կաթիլային ոռոգման համակարգի համար արտադրվող խողովակների մասին: Կաթիլային ոռոգման համա-

կարը նախատեսված է բույսերի տեղային (լոկալ) ոռոգման համար: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ հողը խոնավեցվում է հենց այն քանակով և այն մասում, որտեղ անհրաժեշտ է, այսինքն՝ բույսի կամ ծառի արմատամերձ տարածքում: 2014թ.-ից «ՎԵՍ ՊԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ում տնօրենի պաշտոնն է զբաղեցնում Արմեն Հարությունյանը: Նա 1994 թ.-ին, ավարտելով Գյուղատնտեսական ինստիտուտի «Գյուղատնտեսության մեքենայացում» ֆակուլտետը՝ գործունեություն է ծավալել գյուղատնտեսության, ավտոտրանսպորտի և արտադրության ոլորտներում:



Արտադրությունում իրականացվող աշխատանքների, կաթիլային ոռոգման համակարգերի համար արտադրվող նոր խողովակների և առաջիկա ծրագրերի մասին գրույցեցի Արմեն Հարությունյանի հետ:

- Պարոն Հարությունյան, ո՞ր թվականից է գործում ընկերությունը և ի՞նչ տեսակների է արտադրվել սկզբնական շրջանում և այսօր:

- Ընկերությունը հիմնադրվել է դեռևս 2002թ., սակայն գործարանն իր առաջին արտադրանքը թողարկել է 2007թ.: Արտադրությունը սկսելիս, մեր գործարանն ուներ ընդամենը 2 հոսքագիծ՝ նախատեսված մետաղապլաստ խողովակների և կոյուղու խողովակների արտադրության համար: Այդ տարիներին

Նոր էր սկսվում մետաղական խողովակների փոխարինումը մետաղապլաստ և պլաստիկ խողովակներով, ինչ հայկական շուկայում իրականացվեց հենց մեր ընկերության կողմից: Անընդհատ լայնացնելով արտադրման հնարավորությունները և արտադրանքի տեսականին՝ Նյուպլաստ ընկերությունն այժմ ունի 7 հոսքագիծ և 3 թերմոպլաստ ապարատ, ինչը մեզ թույլ է տալիս արտադրել հայկական շուկայում օգտագործվող ցանկացած տիպի պոլիմերային խողովակ: Բացի վերը նշվածներից «Ջի Ար Փի Սիսթեմս» ընկերությունն էլ իր հերթին ունի 2 հոսքագիծ և բազմաթիվ համապատասխան սարքավորումներ: Նյուպլաստ ընկերությունում արտադրվում են 16 մմ-ից մինչև 300 մմ տրամագծով խողովակներ, իսկ 300-ից մինչև 3000 մմ տրամագծով խողովակները՝ «Ջի Ար Փի Սիսթեմս»-ում:


Մեր գործարաններում արտադրվում են խողովակներ ամենատարբեր նպատակների համար, ինչպիսիք են՝ տաք և սառը ջրամատակարարում և ջեռուցում, գազամատակարարում, ջրահեռացում, կոյուղային համակարգեր, ոռոգում, կաթիլային ոռոգում, հիդրոիներմետրական համակարգերի խողովակներ և այլն: Մեր ընկերությունում արտադրվող վերջին նոր ապրանքատեսակներից են տաք հատակի համար նախատեսված խողովակները:

Մեր կողմից արտադրվող տաք հատակ համակարգի համար նախատեսված խողովակներն ունեն բազմաթիվ առավելություններ, որոնցից են արտաքին հատուկ պաշտպանիչ շերտի առկայությունը, ինչն ավելացնում է խողովակի երկարակյունությունը, կիրառման հեշտությունը և ցածր գինը: Երկրորդ տրոսությունը՝ կաթիլային ոռոգման համակարգի խողովակներն են:

Կաթիլային ոռոգման համակարգի խողովակները մեր ընկերությունում արտադրվում են հատուկ արևապաշտպան նյութերով, ինչը հնարավորություն է տալիս այս խողովակներն օգտագործել հողի մակերեսին արևի ուղիղ ճառագայթների տակ: Կաթիլային ոռոգման համակարգի խողովակները գյուղատնտեսության համար այժմ շատ կարևոր են, քանի որ երկրի վրա օրեցօր պակասում են քաղցրահամ ջրի պաշարները: Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս տևտեսել ոչ միայն ջուրը, այլ նաև պարարտանյութերը, էներգիան և աշխատանքը: Քանի որ ոռոգումն իրականացվում է կաթիլներով, ապա բացառվում է գոլորշիացումը, մոտ 60 տոկոսով կրճատվում է ջրի ծախսը: Կաթիլային համակարգի կարևոր առավելություններից են նաև պարարտանյութերը արդեն ջրի մեջ լուծված տալու հնարավորությունը, բերքի վաղ հասունացումը, բերքատվության աճը, հողի քայքայման կանխումը, հիվանդությունների և մուլախոտերի տարածման հավանականության նվազումը և այլն: Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է ավտոմատացնել ոռոգման ամբողջ գործընթացը: Մեր խողովակները որակապես ոչնչով չեն զիջում շուկայում առկա արտասահմանյան խողովակներին, սակայն, գնային առումով, շատ ավելի ձեռնտու են:

- «Ջի Ար Փի Սիսթեմս» գործարանի արտադրատեսակները կներկայացնե՞ք:

- «Ջի Ար Փի Սիսթեմս» ընկերության խողովակները, և՛ կիրառման նպատակներով, և՛ արտադրման տեխնոլոգիաներով ու հումքերով, էապես տարբեր-



վում են Նյուպլաստ ընկերության խողովակներից: Այս խողովակներն արտադրվում են ապակեմանրաթելերի և չիպեցած պոլիէթերային խեժերի հիմքի վրա: Դրանք ունեն ֆիզիկամեխանիկական յուրահատուկ հատկություններ, ինչը նրանց կիրառությունը դարձնում է շատ նպատակահարմար և մատչելի: Դրանք փոխարինում են և՛ մետաղական, և՛ բետոնե խողովակներին: Դրանք օգտագործվում են հիմնականում ՀԵԿ-երի կառուցման ժամանակ և այլ մեծ հիդրոիներմետրական նախագծերում: Մեր առավելությունն արտերկրում նմանատիպ խողովակ արտադրող ընկերությունների նկատմամբ կայանում է նրանում, որ մեր խողովակները կարող ենք արտադրել կոնկրետ պատվերի պայմաններին, տեղանքին, չափերին համապատասխան և բավականին մատչելի, քան ներկրվածները: Խորհրդատվությունը և մոնիտինգային աշխատանքները մեր կողմից կատարվում են անվճար:

- Ինչպիսի՞ն է սննդի անվտանգության հետ կապված խմելու ջրի խողովակների՝ հումքի, պատրաստի արտադրանքի լաբորատոր փորձաքննության պայմանները:

- Խմելու ջրի խողովակների արտադրության համար նախատեսված հումքը ներկրելիս, մենք անպայման մատակարարից պահանջում ենք ծագման հավաստագիր: Բացի այդ, մեր վերջնական արտադրանքը ևս մեկ անգամ ուղարկվում ենք փորձաքննության ՀՀ առողջապահության նախարարություն, որտեղ ևս մեկ անգամ հաստատվում է:

- Գյուղատնտեսության համար նախատեսված առաջիկայում կարտադրվի՞ նոր տեսակների:

- Պլանավորում ենք սկսել կաթիլային ոռոգման համակարգերի ևս մեկ այլ խողովակի արտադրություն, որտեղ ներդրված են կաթոցիկներով խողովակներ: Նոր խողովակի արտադրությունը կսկսենք հաջորդ տարի, կաթոցիկները լինելու են հենց խողովակի ներսից, մեմբրանային սկզբունքով:

-Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս ցուցահանդեսների մասնակցե՞լ եք:

- Անցած տարի Հայաստանում մասնակցել ենք 2 խոշոր ցուցահանդեսների, իսկ Վրաստանում 1 միջազգային ցուցահանդեսի: ՀՀ-ի ցուցահանդեսները մեզ օգնեցին կաթիլային համակարգի խողովակները ներկայացնել հայ հանրությանը՝ կնքելով մի քանի խոշոր պայմանագրեր: Վրաստանի ցուցահանդեսից ևս դատարկածեղն չվերադարձանք. մենք ունենք ներկայացուցչություն Վրաստանում: Հաղիպել ենք Պարսկաստանից և ՌԴ-ից ժամանած մեր գործընկերներին՝ մեր համագործակցությունը շարունակվում է:

ՍԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՄԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐ

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ARMENIA EXPO 2015»-Ը

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Երևան Էքսպո» կենտրոնում կայացավ «Armenia EXPO 2015» ամենամյա 15-րդ տարածաշրջանային, ունիվերսալ առևտրաարդյունաբերական ցուցահանդեսը: Եռօրյա ցուցահանդեսը կազմակերպվել էր Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների (Գործատուների) միության և

տնօրեն Սամվել Թությանը: Ի դեպ, յուրերն աչքի են ընկնում ոչ միայն սննդային լավագույն հատկանիշներով, այլև ունեն բուժական նշանակություն: Տեսականին ամբողջությամբ սպառվում է ներքին շուկայում: Ցուցադրման օրերին արտադրանքի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել Ռուսաստանի Դաշնությունից և Գերմանիայից ժամանած հյուրերը: Սամվել Թությանի

«Չանախ» պանրատեսակի արտադրությունը: Ընկերության վաճառքի պատասխանատու Սկրտիչ Անուշյանի տեղեկացմամբ, արտադրական ծավալների ընդլայնմանը խոչընդոտում է ֆինանսական միջոցների սղությունը: Չնայած այն հանգամանքին, որ գործարանն այսօր արտադրում է 16 տեսակի պանիր, այնուամենայնիվ, Սկրտիչ Անուշյանի կարծիքով, ֆինանսական միջոցների համարման գործընթացում, ընկերությունն ունի պետական աջակցության անհրաժեշտություն:

Ցուցահանդեսային ֆորումի բացառիկությունը կայանում է իր թեմատիկ կառուցվածքի մեջ: Լինելով ունիվերսալ ցուցահանդես, այն ընդգրկում է էկոնոմիկայի գրեթե բոլոր ոլորտները: Օրինակ, անհատ ձեռներեց Զարույթյան Զաքարյանը, ով Լոռու մարզում ունի 100 մեղվաընտանիք, ցուցադրման էր ներկայացրել մեղր, ակնամոմ, ծաղկափոշի: Ուշագրավ էր ճաշակով փաթեթավորված ակնամոմով մեղրը (փոքր չափերի), որն արժանացավ նաև այցելուների հավանությանը: Նորույթը՝ մեղրից պատրաստված մաճառն էր, որն աչքի էր

գտնել շահավետ գործընկերներ կամ օտարերկրյա ներդրողներ: Այսպես, օրինակ, «Արարատ» մասնաձեռքը ցուցադրման էր ներկայացրել 40 անուն երշիկեղեն, որոնցից 4-ը՝ տարվա նորույթներն էին: Ընկերության մենեջեր Արտակ Բաղդասարյանի տեղեկացմամբ, այս տարի առաջին անգամ սպառողին են ներկայացրել պանրով նրբերշիկներ, պիցցա-սարդեկա, ինչպես նաև մանկական երշիկներ և նրբերշիկներ: Ի դեպ, վերջինս որակի համար արժանացել է ոսկե մեդալի: «Արարատ» մասնաձեռքը շարունակում է ընդլայնել արտադրատեսականին և մինչև տարեվերջ կտողարկվի երշիկեղենի և ուտեստների ևս մի քանի տեսակ: «Ցուցահանդեսը նպաստեց, որպեսզի, մշտական առաքման նպատակով, բանավոր պայմանավորվածություններ ձեռք բերվեն գործարարների հետ: Համագործակցության առաջարկներ արվեցին Շիրակի և Սյունիքի մարզերից: Ցուցահանդեսի ընթացքում ավելացավ նաև երեւանյան ինստիտուտների թվաքանակը», - նշում է Արտակ Բաղդասարյանը: Ի դեպ, համեստի ժամանակ մասնակիցների հավանությանն արժանացան հատկապես պիցցա-սարդեկաները,

ցանկներով: Ինչպես միշտ, բազմաթիվ էին «Արզնի» հանքային ջրի գործարանի տաղավարի այցելուները: Ներկայություն համոզում էին «Արզնի» հանքային ջուրը, «Այգ» աղբյուրի ջուրը և «Պապա Կառլո» լիմոնադի հարուստ տեսականին (նարնջի, տանձի, թարխունի, ագնամորու և այլն): Կազմակերպության ներկայացուցիչ Լիդա Քոչարյանը նշեց, որ հետաքրքրությունը մեծ է հատկապես արտահանողների կողմից, համագործակցության առաջարկներ են արվել Ռուսաստանի Դաշնությունից, ԱՊՀ երկրներից և Եվրոպայից: Ի դեպ, «Արզնի» հանքային ջուրն արդեն մի քանի տարի է, ինչ առաքվում է ՌԴ և ԱՊՀ երկրների շուկա և շարունակում է ընդլայնել սպառման աշխարհագրությունը: Ցուցահանդեսի կազմակերպումը շատ արդյունավետ է թե՛ սկսնակ, և թե՛ ճանաչում ունեցող կազմակերպությունների համար, քանի որ նոր գործընկերներ ենք ձեռք բերում», - նշում է Լիդա Քոչարյանը:

«Աջակից լինել գյուղացուն»՝ այս կարգախոսով է առաջնորդվում Տավուշի մարզի «Միրգ» ՍՊԸ-ը, որը հիմնադրվել է մեկ տարի առաջ՝ «Լճկաձոր» սպառողական կոոպերատիվի նախաձեռնությամբ և «Օքսֆամ»-ի ֆինանսական աջակցությամբ: Արտադրում են հիմնականում հատապտղային պահածոներ, որի հումքը գնում են գյուղացիներից: «Անտառամերձ համայնքներում բնակվող գյուղացիների հիմնական զբաղմունքը վայրի պտուղների և հատապտղների հավաքումն է, որն ամբողջությամբ իրացվում է մեր գործարանի կողմից: Մթերում ենք նաև սեփականաշնորված և տնամերձ այգետարածքներում արտադրված և վերամշակման ենթակա այն մրգերը, որոնք, ապրանքային տեսքի պատճառով, դժվարությամբ են իրացվում շուկայում: Այդպիսով՝ հնարավորություն ենք տալիս սահմանամերձ գոտում ապրող գյուղացուն փոքր-ինչ բարելավել սոցիալական վիճակը, հոգալ առօրյա հոգսերը», - ասում է ընկերության տնօրեն Ռուսլան Անտոնյանը: «Միրգ» ՍՊԸ-ի տարվա նորույթը ֆրանսիական բաղադրատոմսերով խոլոսերի և դոնդոլների արտադրությունն է, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ոչ միայն արտերկրում, այլև՝ ներքին շուկայում:

Ցուցահանդեսը նաև հնարավորություն է տալիս մասնագետներին, գործարարներին և հյուրերին ծանոթանալու արդյունաբերական արտադրության բոլոր ոլորտների վերջին զարգացումներին, տեխնոլոգիաներին և ինովացիոն համակարգերին: Այս առումով, «Armenia EXPO 2015»-ը իր առաքելությունը, կարելի է ասել, կատարել է՝ սկիզբ դնելով նոր ծրագրերի ու մտահարցումների իրականացմանը:



«LOGOS EXPO Center» ցուցահանդեսային ընկերության հետ համատեղ:

«Armenia EXPO 2015»-ը գլխավոր և խոշորագույն ցուցահանդեսն է Հայաստանում, որը հաստատում է իր դիրքերը երկրի գործարարական կյանքում: Հեղինակավոր և նշանակալից այդ միջոցառմանը մասնակցում էին շուրջ 122 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ (մասնակից երկրները՝ Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն, Ուկրաինա, Իրանի Իսլամական Հանրապետություն, Լիտվա, Լեհաստան): Առանձնակի ուշադրության արժանացավ «Թության» ՍՊԸ-ի տաղավարը, որտեղ ներկայացված էին սառը մամլման եղանակով արտադրված կտավատի, արևածաղկի, կանեփի, իլածուկի, ինչպես նաև ծիրանի, դեղձի և խաղողի կորիզներից պատրաստված չգտված յուղեր: «Սառը մամլման եղանակը հնարավորություն է տալիս պահպանել յուղերի օգտակար հատկանիշները: Այդ պատճառով խորհուրդ է տրվում դրանք օգտագործել սառը վիճակում՝

տեղեկացմամբ, առաջիկայում արտահանման վերաբերյալ կարվեն կոնկրետ առաջարկներ: Արտադրության մեջ հիմնականում օգտագործվում է տեղական հումք, որի զգալի մասը ստացվում է ընկերության ցանքատարածքներից: Համագործակցում են նաև ԼՂՀ-ի ֆերմերների հետ:

Ցուցահանդեսն արդյունաբերության ոլորտի ձեռնարկություններին հնարավորություն է ընձեռնում ըստ արժանվույն և առավելագույնս արդյունավետ ներկայացնել իրենց արտադրանքը: «Ամասիայի գլխավորող պանրագործարանը» այս տարի գործարկել է հոլանդական պանրի հոսքագիծը: Արտադրված պանիրը գրեթե ամբողջությամբ իրացվում է ռուսական շուկայում: Կաթը մթերում են 2300 գյուղացիական տնտեսություններից, որի դիմաց ֆերմերներին վճարում են կանխիկ: Տարվա նորույթը «Եղեգնաձորի» կոչվող պանիրն է, որը հարստացված է տարբեր բուսատեսակներով: Այն ևս նախատեսել են արտահանել Ռուսաստանի Դաշնություն, միաժամանակ որոշ խմբաքանակ պետք է վաճառ-



ընկնում յուրահատուկ համով: «Ցուցահանդեսները նպաստում են մեր գնորդների թվի ավելացմանը: Արտադրում ենք ալպիական գոտու բազմածաղկային, ինչպես նաև լորենու մեղր: Այցելուները հատկապես հետաքրքրված էին հուշանվերային տարաներով փաթեթավորված մեղրով, որոնք շատ հարմար են՝ որպես նվեր մատուցելու առումով», - ասում է պարոն Զաքարյանը: Նրա կարծիքով, մեղվաբուծության զարգացման համար առաջնահերթը արտահանման խնդրի լուծումն է, ինչպես նաև մեղրի հետազոտման համար ժամանակակից լաբորատորիայի գործարկումը: «Բացի այդ, պետք է ավելացնել մեղվամթերքի արտադրության տեսականին, ընդլայնել ոլորտները՝ ընդգրկելով նաև կոսմետիկ միջոցների արտադրությունը», - հավելում է նա:

«Armenia EXPO 2015»-ը հնարավորություն է տալիս առավել լիարժեք ուսումնասիրել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ գործող կազմակերպությունների և ապրանքանիշների մասին, որոնք աչքի են ընկնում յուրահատուկ համով: Հարուստ էր «Լոռվա մեղվաբուծներ»-ի տաղավարը, որտեղ ներկայացված էին բամաձ և շրջանակով մեղր, ակնամոմ, ծաղկափոշի, մեղրի մաճառ և այլ մեղվամթերքեր: Առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում ակնամոմից պատրաստված արձանիկները, որոնք հատկապես գրավում էին երեխաների ուշադրությունը: «Մեր արտադրատեսականին միշտ ներկայացնում ենք ամենամյա ցուցահանդեսներին, ինչը ոգևորում է միության անդամներին (անդամակցում են շուրջ 50 մեղվաբուծական ընկերություններ): Բացի այդ, շաբաթ և կիրակի օրերին մեր արտադրանքն իրացնում ենք հիմնականում Կասյան փողոցի անվճար տոնավաճառում: Շատ գոհ ենք թե՛ ցուցահանդեսներից, և թե՛ տոնավաճառշուկաներից: Երկու դեպքում էլ նոր գնորդներ ենք ունենում», - ասում է միության անդամ Մեսրոպ Հարությունյանը: Նրա գնահատմամբ, տարին աչքի է ընկել մեղրի բերքի միջին ցու-



աղցաների հետ կամ ուղղակի ըմպել», - ասում է ընկերության

վի ներքին շուկայում: Վերսկսել են նաև ավանդական

Ոռոգում

ԱՏՈՐԵԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՀՈՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ



Վերջերս ԳՀ բնապահպանության նախարարության և ԵՄ պատվիրակության ներկայացուցիչների մասնակցությամբ, ԵՄ Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանություն (ՄԳՇՄ) ծրագրի շրջանակներում, ԳՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքում տեղի է ունեցել մոնիթորինգի նոր դիտահորի գործարկում:

Ծրագրի օժանդակությամբ կառուցված դիտահորը կահավորվել է ջրի մակարդակի, ջերմաստիճանի և հարողորակցության ժամանակակից էլեկտրոնային սարքավորումներով:

Տեղում նաև անցկացվել է ԳՀ բնապահպանության նախարարության հիդրոտեխնիկական մոնիթորինգի կենտրոնի աշխատակիցների վերապատրաստում՝ հորի վրա տեղադրված ժամանակակից սարքավորումների օգտագործման թեմայով:

Վերոնշյալ աշխատանքներն իրականացվել են գետավազանային կառավարման պլանի մշակման շրջանակներում: Նպատակն է՝ աշակցել ԳՀ բնապահպանության նախարարությանը՝ անդրադառնալու Արարատյան դաշտի արտեզյան ստորերկրյա ջրերի սպառման հիմնախնդրին և գետավազանում ստորերկրյա ջրերի մոնիթորինգի բարելավման միջոցով խթանելու ջրօգտագործման վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկատվության հավաքագրմանը և ջրերի բաշխման վերաբերյալ արդյունավետ որոշումների կայացմանը:

Մեֆոսան նսեռնումիայի մշակումը

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Կան բազմաթիվ տեխնոլոգիաներ, մշակաբույսերի տեսակներ, որոնց մասին ֆերմերների մեծամասնությունը տեղեկություն չունի, իսկ նրանց փորձարկումները ֆերմերների կողմից կապված է մեծ ռիսկերի հետ: Այս տեսանկյունից կարևորվում է սեփական նախաձեռնությամբ փորձաքննարկական ծրագրերի իրականացումը: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի, սեփական նախաձեռնությամբ իրականացվող դաշտային փորձերն ուշագրավ և հետաքրքիր են՝ մշակաբույսերի մշակության վերաբերյալ առաջավոր տեխնոլոգիաների փորձով և կիրառմամբ:

Ներությունը լուրջ և հեռանկարային է՝ կապված ճյուղի բազմազանության, ագրոբիոտեխնիկայի մրցունակության և գյուղատնտեսության հզորացման հետ, բայց ոչ արդյունավետ՝ իրացման հետևանքով բազմաթիվ հիմնախնդիրների պատճառով:

Չորս տարի է, ինչ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի երիտասարդ ֆերմեր Վահե Մկրտչյանը 1 հա հողակտորի վրա հիմնել է ժամանակակից խնձորի այգի, որտեղ առաջին անգամ մշակում է խնձորի նոր սորտեր՝ «Ֆուլի», «Ֆլորիս», «Գոլդբաբլ», «Գրանդ Սմիթ»: Մշակության աշխատանքները ֆերմերը հիմնականում իրականացնում է ԳԱՄԿ-ի մասնագետների խորհրդատվությամբ: Այս տա-



Այս տարի էլ Արագածոտնի ԳԱՄԿ-ի և ֆերմեր Գնել Մխիթարյանի նախաձեռնությամբ, 2,5 հա-ի վրա փորձարկվել է պոստսոստի, տաքդեղի հայրենական և արտասահմանյան, լուլիկի և սմբուկի նոր սորտեր, ինչպես նաև ոչ ավանդական բանջարային մշակաբույսերի տարբեր սորտեր (բրոկոլի, կոլրաբի, ֆենիտել, բրուսելյան, սավոյան, կարմրագլուխ, պեկինյան կաղամբներ, դդում, դդմիկ-ցուկիկ, կոռնկեկ, արմատային նեխուր, սեղանի ճակնդեղ, բողկի, շաղգամի տեսականի): Աճեցրել է նաև ռեհանի 2 սորտ «Մելիսա», «Եղեպակ» (Շալֆեյ): Գնել Մխիթարյանն իր հողակտորում մշակում է նաև բանջարային և հատիկ լոբու տարբեր սորտեր, որի ցանքատարածություններն աչք են ընկնում մշակության բարձր կուլտուրայով: Կիրառվել է մշակության նոր տեխնոլոգիա: Այսինքն՝ հողի մակերես-սային մշակում, նախորդ տարիների մարզերի թարմացում՝ առանց վարի: Պարարտացման նպատակով կիրառվում է արդյունավետ օրգանիզմներ և վերջին սերնդի միկրոկենսաբանական պատրաստուկներ: Գնել Մխիթարյանը միայն մի մտավախություն ունի. արդյո՞ք հնարավոր կլինի իրացնել գյուղմթերքը: Գտնում է, որ իր գործու-

րի ֆերմերն այգում փորձարկել է «Արմեն Բիոթեք» ՍՊԸ-ի արտադրության «Ֆոսֆոգոտ», «Ֆոսֆորամ» օրգանական և կենսաբանական հեղուկ պարարտանյութերը, որոնք օգտագործել է արմատային սնուցմամբ: Փորձարկել է նաև նույն ընկերության արտադրության «Ալքազոտ Փլաս» հեղուկ կենսաբանական պարարտանյութը՝ սրսկման ձևով: Այսօր արդեն արդյունքն ակնհայտ է. կենսապարարտանյութերի օգտագործման շնորհիվ, ֆերմերն ապահովել է բարձր որակի, շուկայում մրցունակ, և որ ամենակարևորն է, էկոլոգիապես անվտանգ խնձորի բերք:

Անուշ Մելքոնյան Արագածոտնի ԳԱՄԿ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳԸ

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Թունաքիմիկատների մեծ մասը սրբացվում է օրգանական սինթեզի ճանապարհով: Դրանք օժտված են կենսաբանորեն բարձր ակտիվությամբ և, բացի վնասատու օրգանիզմների վրա ազդեցությունից, խիստ վրանգավոր են մարդկանց, տառապանքների, օգտակար միջատների և շրջակա միջավայրի համար:

Ընդհանրապես անվտանգ պեստիցիդներ գոյություն չունեն: Դրանց մնացորդները կարող են օրգանիզմներ փանցել թոքերով, մաշկով, աչքի լորձաթաղանթով, երբ սրկումները կատարվում են առանց պաշտպանական հան-

նախատեսված տեղերում և տարաներում, որոնք, ինչպես նաև սրկիչները, օգտագործելուց հետո անհրաժեշտ է վնասագրծել համապատասխան լուծույթներով և լավ լվանալ հոսող ջրով:

Սրկումներն անհրաժեշտ է կատարել պաշտպանիչ միջոցների օգտագործմամբ: Շատ հարմար է այդ նպատակով նախատեսված համապատասխան տեխնիկական և արդյունաբերական նշանակության ռետինե ձեռնոցներ, իսկ ոտքերն անհրաժեշտ է պաշտպանել ռետինե երկարաճիթ կոշիկներով:

Շնչառական օրգանների մեջ պեստիցիդների ներթափանցումը կանխարգելու համար, պետք է կրել համապատասխան շնչադիմակներ, ընդ որում՝ եթե այն կրելիս զգացվում է թունաքիմիկատի տհաճ հոտը, ուրեմն դրանում եղած ածխային ֆիլտրը այլևս պիտանի չէ: Թանգիֆային դիմակների կրելն օրգանիզմը չի պաշտպանում թունավորումից:

Աչքերը պաշտպանելու համար պետք է կրել բոլոր կողմերից հերմետիկ փակ ակնոցներ:

Օգտագործելուց հետո արտահագուստը պետք է վնասագրծել օճառատոպային լուծույթով (25 գ օճառ + 5 գ սոդա 1 լիտր ջրում) 8 ժամ տևողությամբ և հետո լավ լվանալ հոսող ջրով:

Ռետինե կոշիկները, ձեռնոցները և գոգնոցը անհրաժեշտ է մշակել քլորակ-



Աշխատանքային հեղուկի տեղափոխումը

դերձանքի, ինչպես նաև սննդով, երբ չեն պահպանվում բերքահավաքի անվտանգության ժամկետները:

Թունաքիմիկատների նույնիսկ ամենափոքր քանակները կարող են էպան ազդել թոքերի, երիկամների, սրտանոթային համակարգի, ուղեղի և այլ օրգանների աշխատանքի վրա:

Պարբերաբար մուտք գործելով օրգանիզմ՝ դրանք կարող են մի շարք հիվանդությունների առաջացման պատճառ դառնալ, որոնցից ամենատարածվածներն են՝ ուռուցքաբույսությունները, չբերությունը, մեռելաձուլությունը, բնածին արատները, պարկինսոնյան, երիկամային, լյարդի և թոքերի հիվանդությունները, դիմադրողական համակարգի անկումը և այլն:

Թունաքիմիկատների ազդեցությունից խուսափելու համար, անհրաժեշտ է խստորեն պահպանել դրանց կիրառման անվտանգության կանոնները: Նախ անհրաժեշտ է պատրաստուկները պահել սննդամթերքից, անասակերից, տնտեսական և կենցաղային նշանակության առարկաներից մեկուսացված, երեխաների ու շարժողությունից հեռու, օդափոխանակություն ունեցող և հուսալիորեն փակվող տեղերում:

Նախքան աշխատանքային հեղուկի պատրաստումը, անհրաժեշտ է սրկման համար նախատեսված տեղայնքներից հեռացնել ընտանի կենդանիներին և մեղվի փեթակները:

Արգելվում է թունաքիմիկատների հետ կապված աշխատանքներին մասնակցել դեռահասներին, հղի և կերակրող կանանց, ինչպես նաև այն անձանց, որոնք ունեն առողջության հետ կապված խնդիրներ:


Աշխատանքային հեղուկները պետք է պատրաստել միայն այդ նպատակով

րով կան 3-5%-անոց կալիումական սոդայով և լավ լվանալ հոսող ջրով:

Թունաքիմիկատներով աշխատելու ընթացքում արգելվում է ուտել, խմել, ծխել և հանել պաշտպանիչ միջոցները, իսկ ընդմիջման ժամանակ անպայման պետք է լավ լվանալ ոչ միայն ձեռքերը, այլև դեմքը:

Երբ չեն պահպանվում անվտանգության կանոնները մեծանում է օրգանիզմի մեջ թունաքիմիկատների ներթափանցման և սուր թունավորման առաջացման հավանականությունը: Առաջին փաստանշանները կարող են ի հայտ գալ առաջին 4 ժամվա ընթացքում:

Թունավորումը կարող է արտահայտվել ընդհանուր թուլությամբ, մաշկի կարմրությամբ, աչքերի քորով, արցունքահոսությամբ, տեսողության վատթարացմամբ, բերանի խոռոչում և կոկորդում այրվածքի զգացողությամբ,



Պաշտպանիչ միջոցներ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

6 մկանային և ստամոքսի ջրածությունը, սրտխառնոցով, փսխումով, հազով, կրծքավանդակի շրջանում ցավով, գիտակցության խաթարմամբ և, նույնիսկ, գիտակցության կորստով:

Նման դեպքերում պետք է անհապաղ դիմել բժշկի, սակայն մինչ այդ տուժածին անհրաժեշտ է ցույց տալ առաջին բուժօգնություն: Առաջին հերթին պետք է հանել շնչադիմակը, իսկ շնչառության դադարի դեպքում, անհրաժեշտ է առաջ քաշել ծնոտը, լորձից մաքրել բերանի խոռոչը և կատարել արհեստական շնչառություն:

Աղետամոքսային տրակտի թունավորման դեպքում, տուժածին պետք է խմեցնել մի քանի բաժակ զով ջուր կամ կալիումի պերմանգանատի թույլ վարդագույն լուծույթ, այնուհետև մատով առաջացնել արհեստական փսխում:

փոխնեփոխ կիրառումը, քանի որ մինչև նույն պատրաստուկի շարունակական կիրառումը նպաստում է վնասատու օրգանիզմների դիմադրողականության առաջացմանն այդ պատրաստուկի նկատմամբ:

Նախքան այս կամ այն թունաքիմիկատի կիրառումն անհրաժեշտ է տեղեկագրի օգնությամբ ծանոթանալ տվյալ վնասատուի դեմ պայքարի համար առաջարկվող պատրաստուկներին, կիրառման ժամկետներին, պատրաստվող հեղուկի խտություններին, ծախսի նորմաներին, կիրառման առավելագույն թույլատրվող կրկնողությունների թվին: Չի կարելի կիրառել այնպիսի պատրաստուկներ, որոնք նախատեսված չեն տվյալ վնասատուի դեմ պայքարի համար: Այդ դեպքում միջոցառումը դառնում է անարդյունավետ:



Սրսկումն»րի իրականացում

Գործողությունը պետք է կրկնել 2-3 անգամ, ընդ որում՝ անգիտակից վիճակում չի կարելի տուժածին դրդել փսխման: Այնուհետև տուժածին պետք է տալ 8-10 հատ ակտիվացած ածուխ:

Արգելվում է տուժածին տալ կաթ և կաթնամթերք, քանի որ թունաքիմիկատների մնացորդները շատ լավ լուծվում են դրանց մեջ պարունակվող ճարպերում և չեն հեռանում օրգանիզմից: Եթե թունահեղուկն ընկել է աչքերի մեջ, ապա դեմքը և աչքերը մոտ 10 րոպե պետք է լավ լվանալ հոսող ջրով: Մաշկի վրա ընկած թունահեղուկը նախ՝ պետք է թեթևակի սրբել փափուկ կտորով, այնուհետև մաշկը լավ լվանալ օճառով, հոսող ջրով: Մաշկի վնասման դեպքում վերքը պետք է մշակել ջրածնի պերօքսիդի լուծույթով և վրան դնել մանրէազերծ վիրակապ: Նախքան թունաայտության օգտագործումը, պետք է նախօրոք ստուգել սրսկիչի աշխատանքը սովորական ջրով:

Անհրաժեշտ է օգտվել երկարաձող սրսկիչներից. այս դեպքում նվազագույնի է հասնում հեղուկի ընկնելը մաշկի, աչքերի և շնչառական օրգանների վրա: Առավելագույն արդյունք է ստացվում փոշիանման սրսկումների ժամանակ:

Թունաքիմիկատներով սրսկումները ցանկալի է կատարել առավոտյան և երեկոյան ժամերին՝ օդի համեմատաբար ցածր ջերմաստիճանի և արևի նվազ ճառագայթման պայմաններում: Այս դեպքում թունահեղուկն ավելի երկարատև է մնում՝ ազդելով վնասատու օրգանիզմի վրա:

Շատ կարևոր է պատրաստուկի

Շատ կարևոր է խստորեն պահպանել վերջին սրսկումից մինչև բերքահավաքը պահանջվող ժամանակահատվածը, այսինքն՝ պատրաստուկների «սպասման ժամկետներ»: Միայն այս դեպքում կարելի է խուսափել թունավորումներից:

Չնայած պատրաստուկների թունազրկման տևողությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այնուհանդերձ, ապահովության նպատակով, անհրաժեշտ է միջատասպաններով, տգասպաններով և սնկասպաններով վերջին սրսկումը կատարել բերքահավաքից 20, իսկ մուլախոտասպաններով՝ 100-120 օր առաջ:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ջերմատներում թունաքիմիկատների կիրառմանը: Սրսկումները պետք է կատարել մարդագուրկ ջերմատներում, որից հետո անհրաժեշտ է դրանք փակել և կնքել, այնուհետև փակցնել վտանգավորությունը շեշտող նշաններ: Սրսկումներից միայն 3 օր անց կարելի է ջերմատները բացել և լավ օդափոխել:

Չնայած ջերմատներում թունաքիմիկատների թունազրկումը կատարվում է շատ արագ, քան բաց գրունտում, այնուհանդերձ, ապահովության նպատակով, ջերմատներում աճեցված լոլիկի, վարունգի և այլ մշակաբույսերի բերքը պետք է հավաքել սրսկումներից առնվազն 3, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ 7 օր անց:

Լևոն Աճեմյան
ՍԱՌՈՒՊԻ ԳԿ

կենսաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՄՊԱՍՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի Բերդավան, Կողբ, Բերքաբեր, Դիպավան համայնքների բնակիչներն այսուհետև կունենան ոռոգման նոր ցանցեր: Խորհրդային ժամանակ կառուցած ցանցերը շարքից դուրս էին եկել, և ջրի զգալի մասը կորչում էր վերջիններիս մաշվածության պատճառով: Որոշ դեպքերում ջուրը գյուղացուն էր հասնում բացթողումից մինչև 3 ժամ հեռու: Այժմ գյուղացին ջուրը ստանում է ծորակները բացելուց ընդամենը 15 րոպե անց:

տնկված և հին այգի»,- ասում է համայնքի ղեկավարը: Նույնքան դժվար և ծանր է եղել Դիտավան համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցումը: Համայնքի ղեկավար Հակոբ Սարիբեկյանն անձամբ է մասնակցել հողային աշխատանքներին: Կողբ, Բերքաբեր և Դիտավան համայնքներում, ոռոգման ցանցի վերակառուցման ընթացքում գյուղերի բնակիչներն ապահովված են եղել ժամանակավոր աշխատատեղով: Շուտով նորոգված ոռոգման ցանցերի



Այդ ամենը Ադրբեջանի հետ սահմանակից և սահմանապահ հայկական համայնքների համար հնարավոր է դարձել՝ Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» 5-ամյա ծրագրի շնորհիվ:

Հատկապես դժվար է եղել Կողբ համայնքի Դուբանաձոր տեղանքի ջրհավաքի և ոռոգման համակարգի կառուցումն ու վերակառուցումը՝ Կողբ գետի վրա: Նոր կայանը գտնվում է գյուղից մոտ 5 կմ հեռու: Այնտեղ հասնելու համար անհրաժեշտ է անցնել հիմնականում դժվարանցանելի ճանապարհով:

շահագործում է սպասվում նաև Արագածոտնի մարզի Սարալանջ և Արթենի համայնքներում:

«Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) 5-ամյա ծրագիրը մեկնարկել է 2013թ. օգոստոսի 1-ից և ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից:

Ծրագրի նպատակն է՝ հզորացնել գյուղական համայնքները՝ տնտեսական զարգացման հնարավորություններով: Ծրագիրն ունի 3 բաղադրիչ՝ տեղական տնտեսական զարգացում, փոքր ենթակառուցվածքների զարգացում, գյուղական համայնքների բնության պահպանություն:



Կողբեցիների համար այգիների ոռոգումը մեծ նշանակություն ունի, ուստի նրանք չեն զլացել և այդ դժվար անցանելի ճանապարհով մեքենայով ամեն անգամ կրել-տարել են շինանյութը: Կողբ համայնքի ղեկավար Արամայիս Աբովյանի խոսքով՝ նախկինում, մաշվածության պատճառով, ջուրը գրեթե ամբողջությամբ կորչում էր: «Այժմ, վերանորոգված ջրագծի շնորհիվ, հնարավոր կլինի ոռոգել մինչև 200 հեկտար նոր

Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գլխավորությամբ, ծրագիրն իրականացնում են համայնքային զարգացման մեծ փորձ ունեցող «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնը» (CARD), Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը և գործարար խորհրդատվություն իրականացնող «Ի-Վի Քոնսալթինգ» կազմակերպությունը:

ՀԵՏԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է...

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԳԱՐՇԱՀՈՏ ՄԻՐԳԸ՝ ԴՈՒՐԻԱՆ (ՄՐԳԵՐԻ ԹԱԳՈՒՇԻ)

Սուր փշերով ծածկված դուրիան (ինդոնեզերեն «դուրի» բառից՝ թարգմանվում է «փուշ») (տատասկ), աճում է Հարավ-Արևելյան Ասիայում, արևադարձային անտառներում. այն օգտագործում են Կենտրոնական Ամերիկայի և Հարավ-Արևելյան Ասիայի շատ երկրներում:

Չնայած անսովոր տեսքին՝ այն շատ համեղ միջուկ ունի և, միաժամանակ, չափազանց տհաճ հոտ: Միրգը մեծ քանակությամբ կարելի է գտնել Մալազիայում և Բրունեյում: Մարդիկ, ովքեր այն համտեսել են, ասում են, որ միրգը տհաճ հոտ է արձակում, սակայն, եթե հոտ չքաշես, համը հիշեցնում է թարմ կաթից, շաքարից և ձվից պատրաստված կրեմ: Դուրիանի քաղցր համը մոտ է նաև մանգոյի, բանանի, անանասի, վանիլի և պապայայի համերին միաժամանակ: Մրգի հոտն այնքան տհաճ է, որ այդ մրգով թույլ չեն տալիս մտնել հասարակական վայրեր՝ որոշ հյուրանոցներ և խանութներ, ինքնաթիռներ և այլն: Պտուղն իրենից հետո այնպիսի կայուն գարշահոտ է թողնում, որից ազատվելը շատ դժվար է: Այս միրգը երբեք չեն արտահանում:



Կա իրական դեպք դուրիանի հետ կապված. միրգը, որը Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտա էին տեղափոխում, ձախողել է չվերթը՝ արձա-



կած տհաճ հոտի պատճառով: Չվերթը 1 ժամ հետաձգվել է՝ միրգն ուղեբեռից դուրս բերելու և օդանավի օդը մաքրելու համար: Ուղևորներից տասն ընդհանրապես հրաժարվել են թռչել, քանի, որ, նույնիսկ միրգը հանելուց հետո, հոտը մնացել է ինքնաթիռում՝ առաջացնելով գլխապտույտ և սրտխառնոց:

Այս մրգի համային հատկությունները շատ գնահատված են որոշ երկրներում և դրանից պատրաստում են բազմաթիվ դեսերտներ, սոուսներ և ըմպելիքներ: Այն խորհուրդ են տալիս ուտել գրավով, այլապես ձեռքերն անհ-

նար է գարշահոտից մաքրելը: Առավել համեղ պտուղներն աճում են Թայլանդի պլանտացիաներում: Հասուն պտուղն ունենում է 20 սմ տրամագիծ և մոտ 3 կգ քաշ: Հանդիպում են նաև ֆուտբոլի գնդակի չափեր ունեցող մրգեր: Դուրիանը ծա-

ռից չեն քաղում, սպասում են, որ այն ընկնի: Չհասած պտուղները խաշում են և օգտագործում տարբեր կերակրատեսակներում: Այն հարուստ է սնուցիչներով: Պտուղը պարունակում է մեծ քանակությամբ վիտամին B և C: Յուրահատուկ տհաճ հոտը պայմանավորված է պտղում առկա օրգանական ծծմբի գործունեությամբ: Դուրիանը պետք է ուտել հասնելուց 2-3 օրից ոչ ուշ, քանի որ կրեմանման միջուկը վերածվում է լորձանմանի: Բայց բացառապես նրանց համար, ովքեր ունակ են դիմանալ մրգի սարսափելի հոտին, որը մշտական է, այն անասելի հաճույք է պատճառում իր համի շնորհիվ:

Դուրիանը բնության հակասությունների համատեղում կարելի է համարել: Հենց նրանք, ովքեր տանել չեն կարողանում դրա հոտը, համարում են իսկապես արքայական ուտեստ: «Նրանք, ովքեր համտեսել են պտուղը, հավաստիացնում են, որ դա այնքան հրաշալի համ ունի, որ գերազանցում է աշխարհի մյուս բոլոր մրգերին»,- դեռևս 1599 թ. գրել է հոլանդացի ճա-

նապարհորդ Լինսհոտենը:

Թաիլանդի Չատանբուրիում ամեն տարի անցկացվում է երկրի ամենահայտնի մրգի տեսակին նվիրված փառատոն: «Դուրիան փառատոնը», որը նաև կոչում են «գարշահոտ փառատոն», նվիրված է տարօրինակ հոտ ունեցող մրգին: Փառատոնի շրջանակներում կարելի է համտեսել միրգն ու դրանից պատրաստված տարբեր քաղցրավենիքներ: Փառատոնն անցկացվում է ամեն տարի՝ մայիս ամսին:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ՍՐՈՒՆՆԻ ԿԱՄ ԶՎԵՐԱԲՈՅ



Սրոհունը (զվերաբոյ) մինչև մեկ մետր բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Բուժական նպատակով օգտագործվում է բույսի վերգեղման մասը: Այս բույսը պարունակում է ֆլավոնոիդներ, ներկանյութեր, դաբաղող նյութեր, կարոտին, եթերային հանքային, ինչպես նաև վիտամին P, PP, խոլին, սպառնին: Ունի բազմակողմանի ակտիվ ներգործություն: Աչքի է ընկնում կծկանքը վերացնող, ներքին օրգանների հարթ մկանների, լեղաձորանի, միզաձորանի և արյունափոխանության վրա ունեցած ազդեցությամբ:

Ներքին ընդունման ձևով սրոհունը օգտագործվում է լեղաձորանների շարժողունակության բացակայության, դեղնախտի, լեղաքարային հիվանդությունների, արյան շրջանառության որոշ խանգարումների դեպքում: Դեղաբույսը Հնդկաստանում օգտագործվում է որպես ճիճվաթափության միջոց:

Հին Ռուսիայում ժողովրդական հեքիմները կարծում էին, որ «ինչպես

առանց այլուրի հաց չի կարելի թխել, այնպես էլ առանց սրոհունի հնարավոր չէ բուժել մարդկանց և կենդանիների բազմաթիվ հիվանդություններ»: Նրանք սրոհունը համարում էին «99 հիվանդությունների դեղաբույս»: Ուզբեկական ժողովրդական բժշկության մեջ, որպես հատուկ դեղամիջոց, սրոհունը օգտագործվել է լյարդի և ստամոքսի քաղցկեղի ժամանակ:

Եփուկ պատրաստելու համար անհրաժեշտ է 10 գ (1,5 ճաշի գդալ) հումքը լցնել էմալպատ տարայի մեջ, ավելացնել 200 մլ եռացրած ջուր, փակել կափարիչով և 30 րոպե եփել ջրային բաղնիքում: Այնուհետև եփուկի քանակը հասցնել նախնական ծավալին՝ 200 մլ, համապատասխան քանակությամբ եռացրած ջուր ավելացնել, խմել 1/3-ական բաժակ՝ օրական 3 անգամ, ուտելուց կես ժամ առաջ: Պիտանի է մինչև 2 օր: Կարելի է օգտագործել նաև ատամնաբուժության մեջ՝ որպես դաբաղող և հակաբորբոքային միջոց: Սրոհունի դեղատնային ձևերը ևս արժեքավոր են և լայն կիրառություն ունեն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի «ՓՄՉ ԶԱԿ» հիմնադրամն իր աջակցությունն է առաջարկում շահագրգիռ անձանց՝ գյուղատնտեսական տեխնիկայի՝

հացահատիկահավաք կոմբայնների	2 հատ
ճզգրիտ ցանքի սերմնացանների (ՍՊՉ-6LS)	8 հատ
կարտոֆիլ ցանող սարքերի (L-201)	5 հատ
փխրեցուցիչների (L-131)	7 հատ

ձեռքբերման կամ լիզինգային եղանակով իրացման հարցում: Դիմում հայտերը ներկայացնել Հայաստանի «ՓՄՉ ԶԱԿ» հիմնադրամ:

ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԱԳՐՈ Լրատու

2015 թ. ԲԵԺԵՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

1 տարվա գինը՝ 3960 դրամ	6 ամսվանը՝ 1980 դրամ	1 համարինը՝ 120 դրամ
1 տարվա գինը՝ 8100 դրամ	6 ամսվանը՝ 4050 դրամ	1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արարատ» կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու

AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ

ՀՀ Գյուղատնտեսության (նախարարություն) «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն **Ա. ՎԱՀԱՆՅԱՆ**

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ **Լ. ՇԱԽՆԱՋԱՐՅԱՆ**

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ գրանցման թիվ՝ 01 ՄՕ00226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 116
ստորագրված է տպագրության 24.09.2015 թ. տպագրվում է Գ-ԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա